## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 37

### ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 13 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջը.

*համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 13 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատելու մասին:

2. Արարատի մարզի Դալարի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

3. Դալար համայնքի 2017թ. «ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Դալար համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների հաստատման մասին:

5. Արարատի մարզի Դալար համայնքի 2017թ. տեղական տուրքերը և վճարները սահմանելու մասին:
6. Արարատի մարզի Դալար համայնքի 2017թ. բյուջեն հաստատելու մասին;

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՒԻԶԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
7. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 38

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 8 - րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը 250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՒԻԶԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
7. ՄԵՔԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 39

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի պահանջներով,

*համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել Դալարի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՒԻԶԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
7. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հավելված Դալար համայնքի
ավագանու 2016թ.
դեկտեմբերի 28-ի թիվ 39 որոշման

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ 12.

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամով) |
|---|---|---|
| Հայեցողական պաշտոններ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 161 000 |
| Համայնքային ծառ. պաշտոններ | | |
| Աշխ. քարտուղար /1.2-1/ | 1 | 166 000 |
| Գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 161 000 |
| Առաջատար մասնագետ /3.1-1/ , /3.1-2/ | 2 | 145 000 |
| Առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 143 000 |
| Քաղաքացիական աշխատանք | | |
| Գեղմասվար | 1 | 100 000 |
| Գրադարանավար | 1 | 77 000 |
| Տեխ. սպասարկման անձնակազմ | | |
| Պահակ | 1 | 112 000 |
| Հավաքարար | 1 | 100 000 |
| Օպերատոր | 1 | 120 000 |
| Գործավար | 1 | 112 000 |
| | | |
| Ընդամենը | 12 | 1 542 000 |

ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 40

### ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. «ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի պահանջներով

*համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել «Դալար համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՒԻԶԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
7. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հավելված Դալար Համայնքի
ավագանու 2016թ. դեկտեմբերի 28-ի
թիվ 40 որոշման.

# ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. «ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

## ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 17

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Աշխ.թիվը | Ընդամենը ՀՀ ԴՐԱՄ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մանկապարտեզի տնօրեն | 1 | 1 | 146000 | 146000 |
| 2 | Մանկապարտեզի դաստիարակ | 2.5 | 5 | 145502 | 363755 |
| 3 | Մանկավարժ դաստիարակ | 0.55 | 1 | 145502 | 80026 |
| 4 | Երաժշտության դաստիարակ | 0.5 | 1 | 145500 | 72751 |
| 5 | Հաշվապահ - գործավար | 1 | 1 | 77904 | 77904 |
| 6 | Գանձապահ - տնտեսվար | 1 | 1 | 72751 | 72751 |
| 7 | Խոհարար | 1 | 1 | 75000 | 75000 |
| 8 | Խոհարարի օգնական օժ. բանվոր | 1 | 1 | 72751 | 72751 |
| 9 | Լվացքարար | 1 | 1 | 72751 | 72751 |
| 10 | Մանկապարտեզի դայակ | 2 | 2 | 72751 | 145502 |
| 11 | Պահակ գիշերային | 1 | 1 | 72751 | 72751 |
| 12 | Դռնապահ | 1 | 1 | 72751 | 72751 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 13.55 | 17 | X | 1324693 |

ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 41

## ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի պահանջներով

*Համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների 2016թվականի գույքագրման փաստաթղթերի ցուցակը, համաձայն հավելվածի:

Կողմ -8　　Դեմ -0　　Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՒԻԶԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
7. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հավելված
Դալար համայնքի ավագանու
2016թ. դեկտեմբերի 28-ի թիվ 41 որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

Դալար համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների 2016 թվականի գույքագրման

| հիմնական և շրջանառու միջոցների անվանումը, համառոտ բնութագիրը | կառուցման տարեթիվը | քանակը | արժեքը(դրամ) |
|---|---|---|---|
| 1. Գյուղապետարանի շենք | 1972թ | 1 | 3894140. |
| 2. Մանկապարտեզի շենք | 1988թ. | 1 | 3086965 |
| 3. Կուլտուրայի տան շենք | 1982թ. | 1 | 24737770 |
| 4. Կոլտնտեսության գրասենյակի շենք | 1937թ | 1 | 24885 |
| 5. Գրասենյակներ ֆերմայում | 1973թ | 1 | 1496528 |
| 6. № 2 կովանոցի ցանկապատ քարից | 1958թ | 1 | 115425 |
| 7. Հուշարձան քարից | 1958թ | 1 | 4171 |
| 8. Գազի մագիստրալ | 1979թ | 1 | 1057639 |
| 9. Գազի մագիստրալ | 2004թ. | 1 | 950000 |
| 10.Գազի մագիստրալ 252,01 երկ. | 2006թ | 1 | 1299936 |
| 11. Սիլոսի աշտարակ | 1950թ | 1 | 1776 |
| 12. № 2 կովանոցի տանքուր | 1958թ | 1 | 318 |
| 13. Եկեղեցի քարից | 1902թ | 1 | 1786259 |
| 14.Բակի ցանկապատ | 1956թ. | 1 | 446752 |
| 15.Արտեզյան ջրհոր №1 | 1966թ | 1 | 371783 |
| 16. Արտեզյան ջրհոր №2 | 1967թ | 1 | 474454 |
| 17. Արտեզյան ջրհոր №3 | 1980թ | 1 | 715692 |
| 18. Արտեզյան ջրհոր №4 | 1996թ | 1 | 2531000 |
| 19. Պահակատուն քարից | 1955թ | 1 | 862 |
| 20. Ավտոգարաժներ քարից | 1955թ. | 1 | 493441 |
| 21.Տրակտորի գարաժ և պահեստներ | 1978թ. | 12 | 1252403 |
| 22. Դաշտային պահակակետեր | 1961թ | 4 | 1415 |
| 23. Գյուղ. գործիքների ծածկ (նավես ) | 1966թ | 1 | 739181 |
| 24. Բույժ կետի շենք | 1955թ | 1 | 1270000 |
| 25. Ավտոմեքենա Գազ - 31029 | 1999թ | 1 | 2552000 |
| 26. Խմելու ջրի ջրագիծ | 2004թ | 1 | 4145300 |
| 27. Խմելու ջրի ջրագիծ | 2005թ | 1 | 600000 |
| 28. Կանգառի ծածկ և նստարան | 2006թ | 1 | 200250 |
| 29. Գրասենյակ. կահույքի հավաքածու | 2007թ | 1 | 275000 |
| 30. Պրինտեր MF 4010 (երեքը մեկում) | 2008թ. | 1 | 88000 |
| 31. Ջեռուցման համակարգ (Մերկուրի) գյուղապետ. շենքում | 2008թ | 1 | 630000 |
| 32.Ավտոմեք. գազբալոնային համակ. | 2008թ | 1 | 298000 |
| 33.Համակարգիչ | 2008թ | 1 | 347749 |
| 34.Խորքային պոմպ ,, Մերկուրի,, | 2008թ | 1 | 24745347 |
| 35.Խոզանոց | 1959թ | 1 | 1329562 |
| 36 Փափուկ կահույքի հավաքածու | 2010թ | 1 | 300000 |
| 37. Օդորակիչ << Յիտաչի>>ME14HZ | 2012թ | 2 | 560000 |
| 38.Պահարան | 2013թ | 2 | 150000 |

| | | | |
|---|---|---|---|
| 39.Համակարգիչ G 540/2գբ/50գբ գտ 210PHILIPS 19 (պրոցեսոր, մոնիտոր, ստեղնաշար) 2013թ | 1 | 205000 | |
| 40. ՏպիչHP Lasher JET2014 2007թ | 1 | 48000 | |
| 41.UPS ( Mercury) 2013թ | 2 | 40000 | |
| 42.Արտաքին էլեկտրական լուսավորության ցանց 2014թ | (27 ) | | 4526630 |
| 43.UPS Էլ կուտակիչ 2014թ | 1 | 28000 | |
| 44. Հոսանքի կարգավորիչ 500վտ 2014թ | 1 | 12400 | |
| 45.Գրասեղան 2014թ | 1 | 82000 | |
| 46.Մոնիտոր 2014թ | 1 | 58000 | |
| 47.Տպիչ 2014թ | 1 | 30000 | |
| 48.Համակարգիչ 2014թ | 1 | 100000 | |
| 49 Գազի մագիստրալ/114մ/ 2015թ. | 1 | 852000 | |
| 50. Պահարան 2016թ. | 2 | 160000 | |
| 51. Պահարան սպասքի 2016թ. | 1 | 50000 | |
| 52. Բազկաթոռ տնօրենի 2016թ. | 1 | 95000 | |
| 53. Հեռուստացույցի «Սոնի» 2016թ. | 1 | 299000 | |
| 54. Սեղան հեռուստացույցի 2016թ. | 1 | 46000 | |
| Ընդամենը՝ | 72 | 89606033 | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 42

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

*համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել Դալար համայնքի տարածքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/, շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500դրամ:

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-500քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000դրամ

բբ) 501-1000 քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000դրամ

բգ) 1001- 3000 քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000դրամ

բդ) 3001 – ից և ավելի քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500դրամ

դ) 20և ավելի քառ/մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500դրամ

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների

/բացառությամբՀայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500դրամ

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցներ, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <ա> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500դրամ:

4./Համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500 դրամ,

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ,

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12500 դրամ,

ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման համար 22500 դրամ,

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 50000 դրամ:

5/ Համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շիանությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շիանությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 դրամ,

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10000 դրամ,

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12500 դրամ,

ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22500 դրամ,

զ/501-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ:

6/ Համայնքի տարածքում՝

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար սահմանել 150 դրամ, մեկ քառակուսի մետրի համար,

բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամհեղուկացված նավթային գազերի և

տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարված համար սահմանել 150000 դրամ,

գ/խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն տալու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30000 դրամ,

7/համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել`

հիմնական շինությունների ներսում`

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 1600 դրամ,
բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 3500 դրամ,
գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 4600 դրամ,
դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 6500 դրամ,
ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 9500 դրամ,
զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 15500 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում`

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 350 դրամ,
բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 650դրամ,
գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 1300 դրամ,
դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 2500 դրամ,
ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար` 4600 դրամ,
զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 7600 դրամ:

8/ Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանել ` 50000 դրամ:

9/ Համայնքի տարածքում` առևտրի հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել`

ա/ առևտրի օբյեկտների համար` 25000 դրամ,
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար` 50000 դրամ,
գ/ բաղնիքների /սաունաների/ համար` 200000 դրամ,
դ/ խաղատների կազմակերպման համար` 500000 դրամ,
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար` 250000 դրամ,
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար` 100000 դրամ:

10/ Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել`

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությամբ մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 1000 դրամ,

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 2500 դրամ,

գ/ այլ արտաքին գովազդի համար` 500 դրամ,

դ/ սոցիալական գովազդի համար տեղական տուրք չսահմանել:

11.[1] Սույն որոշման 1 – ին , 2 – րդ, 3 – րդ և 4-րդ կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը:

12/ Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու

համար տեղական տուրքը սահմանել 500 դրամ:

13/ Դալար համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ:

14/ Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1500 դրամ:

Տեղական վճարներ

ա)Համայնքի տարածքում շինարարական կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` 5000 դրամ.

բ) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նմանատիպ աշխատանքների համար` ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` 1000դրամ.

գ) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար յուրաքանչյուր մասնակցի համար 1000 դրամ:.

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

2. ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՒԻԶԱ

3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ

5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

7. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 43

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջներով.

*համայնքի ավագանին որոշում է*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի 2017թ. բյուջեն համաձայն հետևյալ ցուցանիշների.

2017թ Դալար համայնքի բյուջեով նախատեսվում է 78948,4 հազ. դրամի եկամուտներ:

Այդ թվում ՝ վարչական բյուջեով ՝ 55576,0 հազ դրամի

1. Հողի հարկ -5260,0 հազ. դրամ
2. Գույքահարկ շենք- շինությունից - 315,0 հազ. դրամ
3. Գույքահարկ փոխադրամիջոցից - 8150,0հազ. դրամ

4. Տեղական տուրքեր - 296,0 հազ.դրամ
   որից՝ շինարարության թույլտվության համար - 0
   ծխախոտի վաճառքի թույլտվություն - 91,2 հազ.դրամ
   ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություն - 54,8 հազ.դրամ

   սեղմված բն. գազի վաճառքի թույլտվություն - 150.0 հազ.դրամ

5.Պաշտոնային դրամաշնորհ (դոտացիա) - 40397.3հազ.դրամ

6.Այլ դոտացիա - 0

7. Համայնքի հողի վարձակալությունից մուտքեր - 907.5հազ.դրամ
8. Այլ գույքի վարձակալությունից մուտքեր - 250,2 հազ.դրամ

Ֆոնդային բյուջեով նախատեսվում է 23372,4 հազ. դրամի եկամուտներ

1. Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ - 8218852,7 դրամ

մնացորդի մուտքեր
2. Ֆոնդային բյուջեի տարեսկզբի - 15153568,9դրամ
ազատ մնացորդ
2017թ համայնքի վարչական բյուջեով նախատեսվում է 55576,0 հազ. դրամ՝ ծախսային պլան: Այդ թվում կառավարման (01.01.01.51) ապարատին՝ 27395,0հազար դրամ, որից.

| | |
|---|---|
| 1. Աշխատավարձ (4111 հոդ.) | - 21510.0 հազ.դրամ |
| 2. Պարգևատրում (4112 հոդ.) | - 1790,0 հազ.դրամ |
| 3.Բանկային ծառ. ծախս. (4211հոդ.) | - 30.0 հազ.դրամ |
| 4. Էներգետիկ ծախսեր (4212 հոդ.) | - 600.0 հազ.դրամ |
| 5. Կոմունալ ծախսեր (4213 հոդ.) | - 10,0 հազ.դրամ |
| 6. Հեռախոս, կապ (4214հոդ.) | - 330,0 հազ.դրամ |
| 7. Ավտոմ. պարտադիր ապահով. (4215հոդ.) | - 38,0 հազ.դրամ |
| 8.Տրանսպ. միջոց. վարձակալ. (4216հոդ.) | - 120,0 հազ.դրամ |
| 9.Համակարգչ. ծրագր. ծառ (4232հոդ.) | - 260 հազ.դրամ |
| 10. Աուդիտորական ծախսեր(4235հոդ.) | - 200,0 հազ.դրամ |
| 11.Մասն. ծառ.(4241 հոդ.) | - 300,0 հազ.դրամ |
| 12.Շենքերի և կառույց. ընթացիկ նոր.(4251հոդ.) | - 300,0 հազ.դրամ |
| 13.Տրանսպ. միջ ընթացիկ նորոգում (4252 հոդ.) | - 117,0 հազ.դրամ |
| 14. Տրանսպ. այլ նյութեր (4264 հոդ.) | - 1250,0 հազ.դրամ |
| 15. Գրասենյակային ապրանքներ և տպիչ նյութեր (4261հոդ .) | - 280,0 հազ.դրամ |
| 16.Մաքրող նյութեր, հիգ . պարագաներ և տնտ . ապրանքներ (4267 հոդ.) | - 260,0 հազ.դրամ |

Նախադպրոցական կրթության ոլորտում (09.01.01.51) նախատեսված է 17200,0 հազ. դրամի ծախս, որից՝16200.0 հազ. դրամ համայնքի բյուջեից, իսկ 1000,0 հազ. դրամ ծնողական գումարներից:
Այդ թվում

| | |
|---|---|
| 1. Աշխատավարձ (4111 հոդ.) | - 12120,0 հազ.դրամ |
| 2. Էներգետիկ ծախսեր (4212 հոդ.) | - 120,0 հազ.դրամ |
| 3. Կոմունալ ծախս և դեռատիզացիա (4213հոդ.) | - 60,0 հազ.դրամ |
| 4. Տրանսպորտի վարձակալ (4216 հոդ.) | - 75,0 հազ.դրամ |
| 5. Մասնագիտական ծառ. (42141հոդ.) | - 45,0 հազ.դրամ |
| 6. Գրասենյակային պիտույքներ (4261 հոդ.) | 80,0հազ.դրամ |
| 7.. Սննդամթերք, մաքրող նյութեր և հիգիենիկ պարագաներ (4267 հոդ.) | -4200.0հազ. դրամ |
| 8. Հատուկ նպ. նյութեր (4269 հոդ.) | -200,0 հազ.դրամ |
| 9. Տնտ. ապրանքներ (4269 հոդ.) | -300,0 հազ.դրամ |

Հանրակրթական ուսուցիում ծրագրի (09.02.02.51) 4639 հոդվածով նախատեսվում է 200.0 հազ. դրամի դրամաշնորհ Դալարի միջն. Դպրոց ՊՈԱԿ – ին:
Աղբահանման և սանմաքրման ծրագրի (05.01.01.51) նախատեսվում է 4213 հոդվածով աղբահանության և մաքրման աշխատանքներ 1800,0 հազ. դրամ:
Մշակութային միջոցառումների կազ. ծրագրով(08.02.04.51.) նախատեսվում է 1420,0 հազ

դրամի ծախսեր :

Այդ թվում `

4239 հոդվածով սռնական օրերի միջոց. կազմ. ծախս. 700,0 հազ. դրամի, և 4269 հոդվածով 720,0 հազ. դրամի նվերների գնման համար :

Թատերական ներկայացումներ ծրագրի (08.02.05.52.) նախատեսվում է 4239 հոդվածով 120,0 հազ. դրամի ներկայացումների տոմսերի գնման համար:

Գույքի նկատմամբ իրավունքի գրանցման և տեղեկատվության տրամադրման (01.06.01.51.) ծրագրի 4241 հոդվածով նախատեսվում է 74,0 հազ. դրամի մասնագիտական ծառայության գումար, իսկ 4819 հոդվածով `26.0 հազ.դրամի նվիրատվության գումար Հայաստանի համայնքների միությանը:

Փողոցների արտաքին լուսավորում ծրագրով (06.04.01.52.)նախատեսվում է 4212 հոդվածով 450.0 հազ. դրամի էլեկտրաէներգիաի իսկ 4251 հոդվածով 450.0 հազ. դրամի կառույցների ընթացիկ վերանորոգման ծախսեր:

Շրջակա միջավայրի պահպանության ծրագրի(05.04.01.55.) 4239 հոդվածով նախատեսվում է 100,0 հազ. դրամի ծախս հակակարկտային կայանի լիցքավորման նպատակով:

Մասնագիտական բժշկական ծրագրի (07.02.01.51.) 4639 հոդվածով նախատեսվում է 100,0 հազ. դրամի դրամաշնորհի պետ. ոչ առևտրային կազմակերպություններին (Դալարի ԱԱՊԿ ՊՈԱԿ - ին) :

Հասարակական կազմ. աջակցություն ծրագրի (10.07.01.55.) 4819 հոդվածով նախտեսվում է 300,0 հազ. դրամի նվիրատվություն հասարակական կազմակերպություններին :

Սոց. անապահով ընտանիքների տոնական օրերի աջակցություն ծրագրի (10.07.01.53.) 4729 հոդվածով նախատեսվում է 700.0 հազ. դրամի այլ նպաստ:

Սոց. անապահով անձանց աջակցություն ծրագրի (10.07.01.54.) 4726 հոդվածով նախատեսվում է 1100.0 հազ. դրամի հուղարկավորության նպաստ , 4729 հոդվածով նախատեսվում է 2200.0 հազ. դրամի այլ նպաստ, 4239 հոդվածով 300,0 հազ. դրամ ծաղկեպսակների պատրաստում և այլ ծառայությունների մատուցում:

Պահուստային ֆոնդի (11.01.02.51.) 4891 հոդվածով նախատեսվում է 2641,0 հազ. դրամի պահուստային միջոցներ:

Ավագանին որոշում է հաստատել 2017թ-ի համայնքի վարչական բյուջեի եկամտային մասը 55576,0 հազ. դրամ և ծախսային մասը 55576.0 հազ. դրամ :

Համայնքի ֆոնդային բյուջեով 2017թ -ի տարեկան ծախսը նախատեսվում է 23372,4 հազ. դրամի.

Այդ թվում `

1.Փողոցների կապիտալ վերանորոգում ասֆալտապատմով.հոդված 5113 - 4500.0հազ.դրամ
հոդված 5134 - 180.0 հազ. դրամի

2.Ցամաքուրդի հեռլիցք. հոդված 5112- 960.0 հազ. դրամ
հոդված 5134 - 45.0 հազ. դրամ

3.Վ. Սարգսյան փողոցի շարունակության գազաֆիկացում հոդված 5112 970.0 հազ. դրամի
հոդված 5134 - 45.0 հազ. դրամի

4. Եկեղեցու տարածքի բարեկարգում հոդված 5112 - 940.0 հազ. դրամ
հոդված 5134 - 40.0 հազ. դրամ

5.Ֆուդբոլի դաշտի կառուցում հոդված 5112 - 5500.0 հազ. դրամ

հոդված 5134 - 220.0 հազ. դրամ

6. Ավտոբուսի կանգառի կառուցում 5112-600,0 հազ. դրամ

7.Այլ մեքենաների և սարքավ.ձեռք բերում հոդված 5121- 4400.0 հազ. դրամ

8. Վարչական սարքավ. ձեռք բերում հոդված 5122 - 700.0 հազ. դրամ

9. Համայնքի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակման աշխատանքների կատարման ծախսեր 4272,4 հազ դրամ:

Ավագանին որոշում է հաստատել ամայնքի ֆոնդային բյուջեի եկամտային մասը 23372,4 հազ. դրամ, և ծախսային մասը 23372,4 հազ. դրամ:

Ավագանին որոշում է հաստատել համայնքի 2017թ. -ի բյուջեն ընդամենը եկամտային մասով 78948,4 հազ. դրամ և ծախսային մասով 78948,4 հազ. դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

2. ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՒԻԶԱ

3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ

5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

7. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ